ՊԱՇՏՈՆ	Շուկայական և իրացվելիության ռիսկերի կառավարման բաժնի առաջատար վերլուծաբան
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	24/05/2024թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածու, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Աջակցել շուկայական և իրացվելիության ռիսկի կառավարման օրական/ամսական գնահատման գործընթացին, պատրաստել և ստուգել շուկայի ամենօրյա/ամսական տվյալները և արժեթղթերի մասին տեղեկատվությունը.
- Իրականացնել շուկայական և իրացվելիության ռիսկի գծով գանձապետական և այլ սահմանաչափերի մոնիթորինգ
- Հաշվարկել և վերահսկել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները (կապիտալի համարժեքության գործակից, LCR, NSFR և այլն):
- Կատարել վարկային, իրացվելիության, շուկայական ռիսկի սթրես-թեստավորում
- Իրականացնել կոնտրագենտների ռիսկերի գնահատում և մոնիտորինգ
- Պատրաստել և ներկայացնել վերլուծական փաստաթղթեր բարձր օղակի ղեկավարներին և ռիսկերի կոմիտեի համար:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բակալավրի կամ ավելի բարձր գիտական աստիճան՝ կիրառական մաթեմատիկայի, վիճակագրության, ճարտարագիտության, ֆինանսների, տնտեսագիտության, էկոնոմետրիկայի կամ համակարգչային գիտությունների ոլորտում
- Նվազագույնը 1 տարվա համապատասխան աշխատանքային փորձ,
- Շուկայական ռիսկի և/կամ վարկային ռիսկի մեթոդոլոգիաների և չափանիշների իմացություն
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների գերազանց իմացություն

- Մաթեմաթիկական, վերլուծական և հետազոտական գերազանց հմտություններ
- Microsoft Excel-ի գերազանց իմացություն (VBA-ի իմացությունը կդիտվի որպես առավելություն), վիճակագրական և հաշվետվական փաթեթների օգտագործման փորձ, ինչպիսիք են SPSS, Database (SQL) և ծրագրավորման հմտությունները կդիտվեն որպես առավելություն
- Ֆինանսական կամ գանձապետական դեպարտամենտում աշխատանքային փորձը կդիտվի որպես ուժեղ առավելություն
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ, միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարելու հմտություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորարար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: